ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ինչպէս յայտնի է յունուարի 19-ից մինչև փետրուարի 1-ը Թիֆլիսի տպարանները չէին բանում, գրաշարների գործադուլի պատճառով։ Այդ հանգամանքը բնականաբար ազդեց և մեր ամսագրի հրատարակութեան վրայ։ Անկարող լինելով փետրուարի գիրքը ժամանակին լոյս ընծայել՝ մենք ստիպուած ենք միացնել փետրուար և մարտ ամիսների համարները։ Այդ ակամայ անկանոնութեան իբրև հատուցում մեր բաժանորդները կը ստանան իբրև յաւելուած «Հաջի Բաբա» վէպի երկրորդ հատորը՝ «Հաջի Բաբան Անգլիայում»։

Հանդուցեալ Ն. Բոզարջեանի յիշատակին նրա ժառանգներից ստացած 30 բուբլիով խմբագրութիւնս ուղարկում է «Մուրճ». 1) Թիֆլիսի էժանագին գրադարանին, 2) Հոփվերան և 3) Արթիկ գիւղերի հասարակութիւններին։

1905 թ. «Մուրճ» նուիրել են հետևեալ պարոնները. 1) Սուրէն Աղամեանց, Արազամի և Փրջամալ գիւղերին։

2) Գեղամ Կոստանեան, Կորիսի շրջակայ գիւղերից մէկին։

3) Արսէն Կրասիլնիկեան, Բիբի-Էյբաթի և Ախմէդլուի «Մանթ. ընկ.» գործարանի բանուորներին։

4) 13 բռնակոթցի երիտասարդ, իրանց գիւղին.

5) Սմբատ Շահազիզ, Աշտարակ գիւղին.

6) Յովհաննէս Միրիմանեան, Իգդիր Մավա և Ալի Ղամբլու գիւղերին։

7) Յ. Խարժաջեան, Նոր-Նախիջևանի արհեստ. ուսումնարանին։

8) Տ. Աֆրիկեան, Հաֆթվանի գրաս. ընկ. գրադ.

9) Բալաբէգ Լալայեան, Շամախու, Քերքենջի, Մադրասայի և Գիւրջիվանի հասարակութիւններին։

10) Մոսկուայից պ. Սիմէոն Եարամիշեան մի բաժանորդագին թողնում է խմբագրութեանս տնօրինութեան. որոշեցինք ուղարկել Կապանի Քաջարանց գիւղին։

11) Եսայի Արզումանեան (Նոր-Զուղայից), Համադանի (Պարսկաստան) հայոց դպրոցին։

12) Բալախանում և Բագուում վերարձակուող Արծուանիկ գիւղացի երիտասարդները, մի օրինակ իրանց գիւղի հասակութեան։

Խմբագրութիւնս յայտնում է յիշեալ պարոններին իր շնորհակալութիւնը։

ՊԱՏԱՍԽԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ. Ե. Ծ. վ. Մուրադեանին.—Հաւատարիմ մեր սկզբունքին զետեղում ենք Ձեր բացատրութիւնը, կրճատելով միայն այն տեղերը, որոնք զուտ անձնական բնաւորութիւն են կրում եւ, վիրաւորանքներ մտցնելով բանակռուի մէջ, միայն խնձում են բուն հարցը։ Ձեր բերած փաստերը աւելի եւս համոզում են որ Թաւրիզի առանձնայատուկ պայմաններում պահանջւում էր առաջնորդի կողմից վարչական աւելի մեծ տակտ, բան կարողացաք ցոյց տալ դուք։